

ԱԶՏԱԿ

ՕՐԱԹԵՐԹ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE **أزتاك** جريدة يومية سياسية وأدبية - الدوة السؤولة، إيثا دروشيان

1500 L.Ո. 76ԳԿ՝ ՏԱՐԻ, ԹԻԻ 142 (21484) ՉՈՐԵՔՇԱՔԹԻ, 27 ՕԳՈՍՏՈՍ 2003 10 ԷՁ

ՔՈՉԱՐԵԱՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՊՈՐՏԻՈՒԺԱՆ

Հայաստանի նախագահ Ռոպերթ Քոչարեան երէկ ընդունեց Հայաստանի Անվտանգութեան Պայմանագիրի (ՀԱՊ) կազմակերպութեան ընդհանուր քարտուղար Նիքոլայ Պորտիուժա՛ն, որուն հետ քննարկեց ռազմական արհեստագիտութեան մարպէն ներս այդ կառոյցի անդամ երկիրներու համագործակցութեան հեռանկարները:

Օգոստոս 25էն ի վեր Երեւան գտնուող Պորտիուժա Հայաստանի դեկավարութեան հետ կը քննարկէ ՀԱՊի առնչուող կազմակերպական խնդիրներ:

Հանդիպումին ընթացքին Քոչարեան եւ Պորտիուժա անդրադարձան նաեւ շրջանային խնդիրներու:

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՈՒԺԵՐՈՒ ԴԷՄ ՅԱՐՉԱԿՈՒՄՆԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻՆ



Իրաքի մէջ զանազան ուժերու դէմ յարձակումները կը շարունակուին առօրեայ դրութեամբ: Իրենց կարգին, ամերիկեան ուժերը կը շարունակեն ապահովական միջոցառումներ եւ գործողութիւններ կատարել իրաքի տարբեր շրջաններուն մէջ:

Իրաքի մէջ ամերիկեան զինուորական բանրեր մը յայտնեց, թէ ամերիկեան ուժերու կարաւան մը Պաղատաի արեւմտեան Ամիրիա շրջանին մէջ ենթարկուած է յարձակումի, որուն հետեւանքով սպաննուած է ամերիկացի զինուոր մը եւ վիրաւորուած են երկու ուրիշներ:

ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՐՇԱՒ

Ամերիկեան զինուորական հրամանատարութիւնը յայտնեց, թէ Պաղատաի հիւսիսային շրջաններուն մէջ

Շար.ը՝ էջ 3

ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷՋ ՇԻՐԱՔ - ՀԱՐԻՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Երէկ, Ֆրանսայի էլիզէ պալատին մէջ վարչապետ Հարիրի հանդիպում ունեցաւ Ֆրանսայի նախագահ Ժակ Շիրաքի հետ: Երկու ժամ տեւած հանդիպումին ընթացքին քննարկուեցան Միջին Արեւելքի եւ պաղեստինեան հարցին վերաբերող խնդիրներ, Իրաքի իրավիճակը եւ իրանեան ֆրանսական յարաբերութիւնները:

Հանդիպումէն ետք Հարիրի յայտարարեց, թէ կայ «Փարիզ - 3» համազուտ մը կազմակերպելու միտքը,

Շար.ը՝ էջ 10

ՄԻՆՉ ԱՊՊԱՍԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԿՐ ԴԻՄԱԳՐԱՒԻ ԱՐՏԱՔԻՆ ԾՆՇՈՒՄ ԵՒ ՆԵՐՔԻՆ ՏԱԳՆԱՊ

ԻՍՐԱՅԷԼ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԵ ԻՐ ԲՈՆԱՐԱՐՔՆԵՐԸ՝ ՍՊԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ, ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ ԵՒ ՆԵՐՆՈՒԺՈՒՄՆԵՐՈՎ



Պաղեստինցի մը սպաննուեցաւ եւ 20 ուրիշներ վիրաւորուեցան, երբ իսրայէլեան ուղղակիները կազմակերպեցին ինքնաշարժի մը վրայ: Այս յարձակումը վիրաւորները մեծամասնոյն տեսակին մէջ երրորդն է վերջին հինգ օրերուն ընթացքին: Յարձակումը տեղի կ'ունենար այն պահուն, երբ պաղեստինեան իշխանութեան վարչապետ Մահմուտ Ապպաս կը ժամանէր, այսօր պաղեստինեան տարբեր կողմերու հետ հանդիպումներ կայացնելու համար:

Պաղեստինեան ազդիւրներ յայտնեցին, որ իսրայէլեան երկու ուղղակիները հրթիռներ արձակեցին կազմակերպիչ հիւսիսային ծապիւր բանակային ծապիւր, թիրախ ունենալով ինքնաշարժ մը: Հինգ անձեր, որոնք կը գտնուէին ինքնաշարժին մէջ, յաջողած են վերջին պահուն դուրս գալ անկէ:

Պաղեստինեան ազդիւրներ յայտնեցին, որ իսրայէլեան ուղղակիները հրթիռներ արձակեցին կազմակերպիչ հիւսիսային ծապիւր, թիրախ ունենալով ինքնաշարժ մը: Հինգ անձեր, որոնք կը գտնուէին ինքնաշարժին մէջ, յաջողած են վերջին պահուն դուրս գալ անկէ:

Պաղեստինեան ազդիւրներ յայտնեցին, որ իսրայէլեան ուղղակիները հրթիռներ արձակեցին կազմակերպիչ հիւսիսային ծապիւր, թիրախ ունենալով ինքնաշարժ մը: Հինգ անձեր, որոնք կը գտնուէին ինքնաշարժին մէջ, յաջողած են վերջին պահուն դուրս գալ անկէ:

ախնջներու դէմ արշաւը, որովհետեւ (ըստ Իսրայէլի) պաղեստինեան իշխանութիւնը անհրաժեշտ միջոցառումները չ'որդրեցին սանձելու համար ծայրայեղական շարժումներն ու անոնց հետեւորդները:

Համարի շարժումի բանրեր մը նշեց, որ յարձակումը կատարուած էր սպաննելու համար շարժումի զինեալ թեւի երկու անդամներ՝ Ուաշլ Իսայան եւ ինչպէս Մասուտ: Անոնք երկուքն ալ յաջողած են խոյս տալ:

Իսրայէլեան ուժեր երէկ առաւօտ ժեներներ խուժեցին եւ կրակմարի դրութիւն հաստատեցին: Ականատեսներու վկայութեամբ, իսրայէլացի զինուորներ կրակ բացած են քարեր արձակող պաղեստինցիներու ուղղուած թեւեր, վիրաւորելով երեք պատանիներ:

Միւս կողմէ, Իսրայէլ որոշած է շարունակել ծայրայեղական պաղեստինցիներու դէմ արշաւը, որովհետեւ (ըստ Իսրայէլի) պաղեստինեան իշխանութիւնը անհրաժեշտ միջոցառումները չ'որդրեցին սանձելու համար ծայրայեղական շարժումներն ու անոնց հետեւորդները:

Շար.ը՝ էջ 2

ՀԱՄԱՉԱՅՆԱԿԱՆ ԴԱՇԻՆՔԻ ՈՒԺԵՐԸ ԿԸ ԳՈՐԾԱԿՑԻՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՄԱՐՁԷՆ ՆԵՐՍ

Հայաստանի քաղաքական համաձայնական դաշինքի կուսակցութիւնները, անկախ գործադիր իշխանութեան ներս համագործակցութեան, կը ծրագրեն աշխուժ գործակցութիւն ծաւալել նաեւ խորհրդարանին մէջ եւ հանդէս գալ միացեալ օրէնսդրական նախաձեռնութիւններով:

Ազգային ժողովի Հ. Յ. Դ. խմբակցութեան ղեկավար Լեւոն Մկրտչեան յայտնեց, թէ Հ. Յ. Դ. խմբակցութեան եւ «Օրինաց Երկիր» կուսակցութիւններու խմբակցութիւններուն միջեւ աշխատանքներու համագործակցութեան հաւանական կրկնութիւններէն: Ան նշեց, որ համագործակցութեան պիտի իրականացուի փոխ տեղեկացման միջոցով եւ աւելցուց, որ Հ. Յ. Դ. խմբակցութեան անդամները պատրաստ են մասնակցելու միւս ուժերուն կողմէ պատրաստուող նախագիծերու քննարկումներուն, ինչպէս նաեւ քննարկումներուն մասնակցի գարձներու այլ պատգամաւորներ:

Համաձայնական դաշինքի որեւէ կուսակցութեան կողմէ ներկայացուած օրէնքի նախագիծ այսուհետեւ պիտի կրէ դաշինքի երեք կուսակցութիւններուն ստորագրութիւնը: «Օգոստոս 29ին կայանալիք դաշինքի խորհուրդի նիստին այս բոլոր հարցերը պիտի քննարկուին», ընդգծեց Մկրտչեան:

Հ. Յ. Դ. խմբակցութեան աշխատանքային խումբը ներկայիս կը գրադիր երկու հիմնական նախագիծերու պատրաստութեամբ, որոնք կը վերաբերին կառավարութեան գործունէութեան եւ տարածքային ինքնակառավարման: Միաժամանակ խմբակցութիւնը շրջանառութեան մէջ դրած է հաւաքակցութեան դէմ պայքարի, երեք եւ աւելի երեխաներ ունեցող ընտանիքներուն ընկերային աջակցութեան մասին օրէնքի նախագիծեր:

Լեւոն Մկրտչեանի համաձայն, Հ. Յ. Դ. խմբակցութիւնը նաեւ սերտ համագործակցութիւն կը ծաւալէ ընկերային ապահովութեան, առողջապահութեան եւ գիւղատնտեսութեան նախարարներուն հետ, որովհետեւ այլ մարպէրէն ներս Հ. Յ. Դ. ստանձնած է մեծ պատասխանատուութիւն:

ԱՄԱԼԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ ԱՅՅԵԼԵՑ «ՍԱՐԴԱՐԱՊԱՏ» ԱԿՈՒՄԲ



Ամալ շարժումի քաղաքական դիւանը ներկայացնող պատուիրակութիւն մը, երեսփոխան Ալի Պապիի նախագահութեամբ, այցելեց «Սարդարապատ» ակումբ, ուր տեսակցութիւն ունեցաւ Հ. Յ. Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի պատուիրակութեան հետ:

Տեսակցութեան ընթացքին արծարուեցան Լիբանանի ու շրջանը յուլող քաղաքական եւ տնտեսական հարցեր:

Ամալի պատուիրակութիւնը հրաւիրեց Կեդրոնական Կոմիտէի ներկայ գտնուելու Իմամ Մուսա Սատրի անյայտացման 25րդ տարեդարձին առիթով յառաջիկայ Կիրակի Պալատի մէջ կայանալիք ժողովրդային հանդիսութեան:

ՄԱՍՆԱԿՑԵՑԷՔ «ԱԶԴԱԿ»Ի ՄՐՅԱՆՔԻՆ ԷՁ 3

ԱՐՄԻԹԵՅՃ ԵՒ Ի. ԱԼԻԵՒ ԲՆՆԱՐԿԵՑԻՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՏԱԳՆԱՊԸ

Արպէյճանի վարչապետ Իլիամ Ալիեւ վերջերս այցելեց Միացեալ Նահանգներ, ուր հանդիպումներ ունեցաւ ամերիկացի պաշտօնատարներու հետ: Ի. Ալիեւ այցելեց նաեւ իր հօր՝ Արպէյճանի նախագահ Հայտար Ալիեւի, որ կը բուժուի Բիլիվէնտի հիւանդանոցին մէջ:

Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարութեան բանբեր Ֆիլիփ Ռիքըր Երկուշաբթի օր յայտարարեց, թէ Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարի տեղակալ Ռիչըրտ Արմիթէյճի հետ Իլիամ Ալիեւի հանդիպումին ընթացքին քննարկուած է Լեւոնային Ղարաբաղի տագնապի լուծման հարցը: Ռիքըր մանրամասնութիւններ չհաղորդեց հանդիպումին մասին, այսուհանդերձ նշեց որ կողմերը քննարկած են նաեւ Արպէյճանի մէջ կայանալիք նախագահական ընտրութիւնները: Ըստ «Ապտոնթիւն» ձայնասփոխի կայանին, Արմիթէյճ կոչուողած է Ի. Ալիեւին կարելի ամէն միջոցի դիմել, որպէսզի ընտրութիւնները կայանան համաձայն միջազգային չափանիշներուն: «Մէք ուշի ուշով պիտի հետեւինք», իր կարգին ըսած է Ռիքըր:

Cigaronne

ՀԱՅԿԱԿԱՆ ԾԽԱԽՈՏԸ
ԱՃԽԱՐԱՇՈՋԱԿ ԵՒ ԻՐԱՅԱՏՈՒԿ ՖԻԼԹԸՐՈՎ
ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ

Keeps smoke out of your face and eyes
Ծուխը հեռու կը պահէ աչքերդ եւ դէմքդ

Սովորական ծխախոտը
Conventional filter

ՄԻԿԱՐՈՆ Ծխախոտը
CIGARONNE

Protects from getting fingers yellow, from touches of wet, dirty, greasy fingers
Կը պաշտպանէ մատներդ դեղնելէ, քրտնելէ եւ աղտոտելէ

Սովորական ծխախոտը
Conventional filter

ՄԻԿԱՐՈՆ Ծխախոտը
CIGARONNE

Prevents the penetration of the percolated tar and nicotine into the oral cavity
Կ'արգիլէ բարի եւ սիգարէթի անցնող բերանէ եւ կողորդէ

Սովորական ծխախոտը
Conventional filter

ՄԻԿԱՐՈՆ Ծխախոտը
CIGARONNE

«CIGARONNE» FILTER - HOLDER CIGARETTE

وزارة الصحة تحذر: التدخين يؤدي إلى أمراض خطيرة ومميتة
مستوردة وموزعة مباشرة من قبل إدارة حصر التبغ والتبناك اللبنانية

ԱՐԱՐԱՍԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԴԻՍԵՆ SAHALCO ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ԿՈՒ. 04 - 712409, 03 - 201957 ԵՒ 03 - 201967 ԹԻՒՆԻՐՈՒՆ


ՆԱԽԱՐԱՐԱՅ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԶԳԱՅՈՒՆ ԹՂԹԱԾՐԱՐՆԵՐՈՒ ԳԾՈՎ ԱՐՄԱՏԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՊԵՏՔ Է ԱՌՆԷ

ԿՐՍԷ ՆԱԽԱԳԱՐ ԼԱՏՈՒՏ

Նախագահ ԿՐԸ Ընկրվախոս յայտնեց, թե կառավարության սկսած բարեկարգումներն գործընթացը կը նպատակադրե նեցուկ կանգնիլ քաղաքացիին, հոգալ անոր եւ թեթեցնել անոր բեռը:

Ան դիտել տուաւ, թէ այս արշաւին նպատակներէն է պահպանել քաղաքացիներուն արժանապատուութիւնն ու նկատագիրը եւ հանրային հաստատութիւններն ու վարչական համակարգը դնել ի սպաս ժողովուրդին եւ ոչ ի վնաս անոր:

Նախագահ Լախուտ շեշտեց, թէ բարեկարգումները կարելի չէ իրականացնել անձեռն միջոցով, այլ անոնք պէտք է ըլլան հաւաքական աշխատանքի եւ համագործակցութեան արդիւնք: Ան հաստատեց, թէ բարեկարգումներ կատարելու որոշումը անձնական չէ, այլ անհկա կիրարկումն է նախարարաց խորհուրդի հաւաքական որոշումներուն: Նախագահը աւելցուց, թէ արտօսելի չէ, որ Լիբանան իր տնտեսութեան մէջ կորսնցնէ այն, ինչ որ շահեցան քաղաքականութեան եւ ապահովութեան մէջ եւ դիտել տուաւ, որ ամէն պարագայի ժամացոյցին սլաքները բնաւ



նահանջ պիտի չարձանագրեն:

Խօսելով Պաապտա-Ալէյի ընտրութիւններուն մասին Լախուտ ըսաւ, թէ պիտի ստեղծուի ժողովրդավարական այն մթնոլորտը, որուն մէջ քաղաքացիները պիտի ընտրեն իրենց երեսփոխանը: Նախագահին այցելուներուն կարգին էր լրագրողներու սենտիքայի նախագահ Մըլիս Բարաւ, որուն հետ նախագահը քննարկեց լիբանանեան իրադրութիւններ եւ վարձագումներ: Բարաւ անոր ներկայացուց սենտիքային եւ անոր յանձնախումբերուն աշխատանքները, որոնք կը նպատակադրեն լիբանանեան տեղեկատուութիւնը պատկառելի եւ միջոցառելի իրադրութիւններուն հետ քայլ պահելու կարելիութիւններ ստեղծել:

Նախագահը ընդունեց նաեւ ճափոնական պատուիրակու-

թիւն մը եւ անոր հետ քննարկեց երկու երկիրներուն միջեւ յարաբերութիւնները վարձագումներու եւ անբաւարար կարելիութիւնները:

Լախուտի այցելուներէն էին Լիբանանի մէջ Մեքսիքայի դեսպանը եւ վանապան կազմակերպութիւններու եւ միութիւններու ներկայացուցիչներ:

«ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»Ի ԱՅՍՕՐՈՒՄՆ ԶԱՅՏԱԳԻՐՆԵՐԸ

- 8:30.- Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ արաբերէն
- 8:45.- «Աստղեր»
- 9:00.- «Ռատիօ Թատրոն»՝ հեղինակ՝ Զահանդուլիստ. կը ներկայացնէ Մարի Ռոզ Մանուկեան եւ Մանուէլ Մարգարեան
- 9:40.- «Առաւօտեան տուն»
- 11:30.- Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ հայերէն
- 3:00.- Արաբերէն յայտագիր
- Հարցազրոյց տողք. Նապիլ Հատտատի հետ
- Ծանօթացում՝ Լիբանանի զբօսաշրջութեան կեանքին եւ բնութեան հրաշքայիքներէն Օթիքայի քարայրին պատմութեան
- 6:00.- «Դալար բարտի»՝ հայերէն հարագատ երգի մատուցում
- 8:00.- «Ալօ Կոնայ Զայն»՝ խաղ - մրցանք ուղղակի ձայնասփռում

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

●Առի գնահատանք Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան Ազգային քոլէճի պաշտօնաթերթ «Ճառագայթ»ի հրատարակութեան տեր եւ տիկին ժաբ Մանուկեան 100 \$ Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան Ազգային քոլէճին:

ԾԱԽՈՒ ՏՆ

●Ճամբորդութեան պատճառով երկարկամ 2 խանութներ, երկու փեղկերով եւ անջատ բափուներով, 60 եւ 45 քառ. մետր տարածութեամբ, յարմար գործատեղիի կամ մթերատոցի: Պուրճ Համուտ, «Արմինիա» շէնքի կից, մայր թաղին մէջ: Դիմել՝ հեռ. 03-503349, ժամը 8:00էն 13:00:

ԾԱԽՈՒ ԶԱՐԿԱԲԱԺԻՆ

●Ճամբորդութեան պատճառով, Սգեդի սկիզբը, Գորակառոյց. 160 քառ. մետր, 3 Գնջատեցեալ, հիւրարահ, ճաշարահ, 3 բաղնիք, կեդրոնական էր ընդտիսիոնէ, ջրհոր, ժէնթրաթոր, կառատուն: Գեղատեսիլ դիրք: Դիմել՝ հեռ. 01 - 267909:

ԿՈՒԶՈՒԻ

●Ամերիկեան էր քոն-տրէրթի ընկերութիւնն մը (Արեւմտեան Պէրու) կարիք ունի փորձառու թընթիւններու, հոնուտ տեղադրող եւ նորոգող (Central air-conditioning): Դիմել՝ հեռ. 01 - 363181 կամ 03 - 800601:

ՇՐՋՊԱԼԼԱՅԻ ԵՐԿՈՒ ՆԱԿԱՏԱԿՆԵՐՈՒՆ ԶՈՒՂԱՐԿԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Հրգպալա երէկ հողին յանձնեց նախորդ օր իսրայէլի կողմէ իրեն յանձնուած երկու նահատակներուն՝ Ամմար Հիւսէյն Համուտի եւ Դասսան Զաաթարի դիակները:

«Սալէհ Հանտուր» նահատակին անունը կրող հիւանդանոցէն յուղարկուողներու խումբը ուղղուեցաւ այն վայրը, ուր Սալէհ Հանտուր նահատակուած էր:

Հրաժեշտի վերջին խօսք արտասանեց Հարաւի մէջ Հրգպալայի ներկայացուցիչ շէյխ Նապիլ Քաաուբ, որ ըսաւ, թէ նահատակներու դիակներու ստանձնումը ցուցանելի մըն է, որ Հրգպալա կառած կը մնայ իր հետեւորդներու ազատ արձակման եւ նահատակներուն դիակներու վերատիրացման, որովհետեւ կուսակցութիւնը սուրբ կը նկատէ իր նահատակները եւ գաղափարներուն համար իրենց կեանքը չի նայողները:

Նապիլ Քաաուբ դիտել տուաւ, թէ յանքան ատեն, որ լիբանանցի գերիներ կը գտնուին իսրայէլեան բանտերուն մէջ, յաղթանակը եւ ազատութիւնը թերի կը նկատուին:

Ապա խումբը ուղղուեցաւ Տպին, ուր Ամմար Հիւսէյն Համուտ գործողութիւնը կատարած էր:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

●ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ եւ առեւտուրի նախարար Մարուան Համատէ իր գրասենեակին մէջ ընդունեց այցելութիւնը Լիբանանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Վինսընթ Պէթրիլի եւ անոր հետ արծարծեց Մեքսիքայի մէջ կայանալիք Քանքոքի համագումարին առնչուող հարցեր եւ Լիբանանի խնդրանքը՝ այս համագումարին մասնակցելու:

●ԱՐՏԱՔԻՆ գործող եւ գաղթականներու հարցերու նախարար Ժան Օպէյտ երէկ ընդունեց Քաաուբի ու Քաաուբի եւ արհեստագիտութեան նախարար Ապտալա Աթիան: Հանդիպումին ընթացքին քննարկուեցան երկու երկիրներուն միջեւ աւելի սերտ գործակցութիւն ծաւալելու կարելիութիւնները:

●ՏԵՂԵԿԱՏՈՒԹԵԱՆ նախարար Միշէլ Մըմահա հանդիպում ունեցաւ ճափոնական պատուիրակութեան մը հետ եւ անոր հետ քննարկեց Պէյրութի մէջ կայանալիք արաբական-ճափոնական համագումարի նախապատրաստական աշխատանքները:

●ԱՄԵՐԻԿԵԱՆ եւ իսրայէլեան բանտերուն մէջ գտնուող գերիներու պաշտպանութեան ազգային խորհուրդը կազմակերպեց ժողովրդային հաւաք մը Ժաթէլ-տէի մէջ, իբրեւ գորակցութիւն լիբանանցի գերիներուն եւ անոնց դատին:

●ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ եւ առեւտուրի նախարարութեան հրաւերով տեղի ունեցաւ հանդիպում մը, իբրեւ նախապատրաստութիւն պօսաշրջութեան եւ առեւտուրի ամուսն: Հանդիպումին ընթացքին ներկայացուեցան նոր ծրագիրներ եւ այս մարկերը վարձագումներու նոր առաջարկներ:

ԱՃԱՆԱՅԻՆ ԲԱՅՈՒԿ ԶՐԱՊՏՈՅՈՅ ԴԵՊԻ ԵՐԵՒԱՆ ԵՒ ԾԱՂԱՋՈՐ

15Ժ 21 Սեպտեմբեր, մէկ շաբաթ լման պտոյտներով, գին փոխան 750\$ միայն 444\$, իսկ երկու շաբաթ՝ 15Ժ 29 Սեպտեմբեր Երեւան, Ծաղկաձոր, Սեւան եւ Դարաբաղ գին փոխան 1200\$, միայն 750\$, շատ սահմանափակ տեղեր:

ԶԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Տեղեկացնում ենք, որ Օգոստոս 29ին, երեկոյեան ժամը 6:00ին, Լիբանանում Հայաստանի դեսպանութիւնում տեղի է ունենալու հանդիպում Հայաստանի Ազգային Ժողովի արտաքին յարաբերութիւններին յանձնատրոյվի նախագահի տեղակալ, գործարար պարոն Արա Բաղէեանի եւ Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան առընթեր «Հայաստանի Զարգացման Գործակալութեան» գործադիր տնօրէն պարոն Վահագն Մովսիսեանի հետ:

Հանդիպման ընթացքում ներկայացուելու են Հայաստանի տնտեսական ոլորտում վերջին տարիներին արձանագրուած կարելորագոյն ձեռքբերումները եւ առաջիակացները, քննարկուելու են համաշխարհային տնտեսութեան համարկուելու եւ միջազգայնօրէն ճանաչուած օրէնքներուն համապատասխան Հայաստանում ներդրումային ու գործարար միջավայրի կայացման ուղղութեամբ իրականացուող գործընթացներին, ինչպէս նաեւ Հայաստան - Սփիւռք տնտեսական համագործակցութեան վարձագումն հեռանկարներին եւ հնարաւորութիւններին առնչուող հարցեր:

ԼԻԲԱՆԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆՈՒԹԻՒՆ

26-08-2003 թ.

Հասցէ՝ 28 Ժամային փողոց, Մթալլեպ, հեռ. 04 - 418860:

ԿՈՒԶՈՒԻ

●Վաճառականական հաստատութիւն մը կարիք ունի քարտուղարուի մը: Հաշուապահութիւն + համակարգիչ + ֆրանսերէն եւ արաբերէն լեզուներ գիտումը պայման: Առնուազն երեք տարուան փորձառութիւն: Դիմել՝ հեռ. 01 - 258018 եւ 01 - 257235 առաւօտեան ժամը 8:00Ժ 4:00:

ՀԱՆՐԻ ՀԸՆՈՒ ԱՅՅԵԼԵՑ ՍԵԼԻՍ ՀՐՍԻ

Պաապտա - Ալէյի մասնակի ընտրութիւններու թեկնածու Հանրի Հըլու երէկ այցելեց նախկին վարչապետ Սելիմ Հըւի: Հանդիպումին ետք ան նշեց, թէ այցելութիւնը բարեկամական բնույթ ունի եւ անոր նպատակն էր առաջնորդուիլ իրենց ընտանիքին ձերտ բարեկամ Սելիմ Հըւի թելադրանքներով եւ վայելել անոր նեցուկն ու վորակցութիւնը:

Միւս կողմէ, նախկին նախագահ Ամին Ժըմալի կոչ ուղղեց Պաապտա - Ալէյ շրջանի բնակիչներուն խիտ շարքերով մասնակցելու երեսփոխանական մասնակի ընտրութիւններուն եւ վորակցելու Հանրի Հըլուի: Ան նշեց, թէ այս մէկը իւրաքանչիւր լիբանանցիի թէ իրաւունքը եւ թէ քաղաքացիական պարտականութիւնն է:

Իր կարգին, Լիբանանի Փաղանգաւոր Կուսակցութիւնը իր վորակցութիւնը յայտնեց թեկնածու Հանրի Հըլուի եւ նշեց, թէ այս վորակցութեան նպատակն է շրջանին միասնականութիւնը պահել եւ անհկա կը համընկնի կուսակցութեան գաղափարներուն եւ համոզումներուն:

ԽՐԱՅԵԼ ԿԸ ԶԱՐԿԱԿԵ ԻՐ ԲՈՒՆԱՐԱՐՔՆԵՐԸ...

Շարունակուած Ա. Էշէն

Մինչ այդ, պաղեստինցի վարչապետ Մահմուտ Ապպաս կազմակերպեց նախագահելու համար Ժողովի մը, որ պիտի քննարկէ ապահովութեան հարցը եւ գետնի վրայ կառավարութեան որդեգրելիք միջոցառումները:

Ապպաս եւ ապահովութեան հարցերու նախարար Մոհամէտ Տահլան խոստացած են լայնածիր արշաւի մը ձեռնարկել ծայրայեղական-արմատական շարժումներուն եւ անոնց հետեւորդներուն դէմ: Խոստումը կատարուած էր Երուսաղէմի անցեալ Երեքշաբթի օրուան անձնասպանական գործողութեան լոյսին տակ, սակայն ցարդ պաղեստինեան կառավարութիւնը չօգտփելի միջոցառումներ չէ որդեգրած: Թէեւ գէնքերը հաւաքելու հրամանագիր մը արձակուած է, սակայն արդիւնք մը չէ նուաճած: Իսրայէլ կարեւորութիւն չտուաւ նաեւ գէնքի մաքսանեցութեան ծառայող գետնուղիներուն փակումին, դիտել տալով, որ անհկա միջազգային հանրութեան աչքին փոշի կը ցանէ եւ կարեւորութիւն չի ներկայացներ:

Ապպասի գործը կը դժուարացնեն նաեւ պաղեստինեան իշխանութեան նախագահ Շասէր Արաֆատի հետ իր հակամարտութիւնը եւ իշխանութեան պայքարը: Կազմակերպութիւնը եւ կառավարութիւնը հոնկէ դեկավարելով՝ Ապպաս կ'ուզէ կարելի եղած չափով հեռու մնալ Արաֆատէն, որ «բանտարկուած» կը մնայ Ռամալլա:

Իսրայէլի արտաքին գործոց նախարար Սիլվան Շալոմ ըսաւ, որ ամերիկեան հովանաւորութիւն վայելող խաղաղութեան ճամբու բարտէսը յառաջիակացքի մէջ դնելու կարելիութիւն պիտի չըլլայ, եթէ Ապպաս չկարենայ անդամահատել արմատական շարժումները, որոնք իսրայէլի դէմ յարձակումներ կը գործեն: Շալոմ աւելցուց, որ իսրայէլ տակաւին Ապպասէն կը սպասէ գործադրել խոստումները իւր անդամահատել ահաբեկչական խմբակները: Այնքան ատեն որ պաղեստինեան իշխանութիւնը կը զլանայ այս աշխատանքը կատարելէ, իսրայէլ պիտի չարունակէ արշաւը ինչեւ շարժումներուն դէմ՝ «բարձրակարգութեամբ համար իր ժողովուրդին ապահովութիւնը»:

Իսրայէլեան ուժեր Նապոլուսի մէկ հիւանդանոցը մտնելով, ձեռքբերեցին վիրաւոր երկու պաղեստինցիներ, որոնք «Աքսայի նահատակներու Փաղանգաներ» ունեւանքներ են: Իսրայէլեան ռատիոկայանը հաղորդեց, որ երկու պաղեստինցիները թէլ Աւիւի մէկ հիւանդանոցը փոխադրուած են: Իսկ կազմի հարաւային շրջանին մէջ, իսրայէլեան Բոսայթեր բնակեցման վայրի մը մուտքէն ումբեր արձակեցին իրան Երուսաղէմ քաղաքին վրայ, ուր երեք պաղեստինցիներ վիրաւորուեցան:

Միւս կողմէ, Մահմուտ Ապպաս դատապարտեց իսրայէլի կառավարութեան մէկ որոշումը, որ ծայրայեղական հրեաներու կ'արտօնէ այցելել Երուսաղէմի Աքսա մզկիթին համար: Ապպաս ըսաւ, որ այսպիսի որոշում վայրագութիւն կը հրահրէ:

ԽՐԱՅԵԼ ԿԸ ՓՈՐՁԵ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ, ԱԿԱԲԵԿԿԱԿԱՆ ԶԱՐԺՈՒՄ ԸՆԴԱԿԵ ԸՄՍԱՍԸ

Իսրայէլի դիւանագիտական արշաւի մը ձեռնարկած է համոզելու համար Երուսաղէմի Միութիւնը, որ հետեւի Միացեալ Նահանգներու օրինակին եւ ահաբեկչական կազմակերպութիւն հռչակէ Համասը: Արտաքին գործոց նախարարութեան երուսաղէմի բաժանմունքին տնօրէնը՝ Տանիէլ Շէք ըսաւ, որ իսրայէլ կը յուսայ համոզել Երուսաղէմը, յատկապէս Ֆրանսան, որ տակաւին կը տատանուի այսպիսի յայտարարութիւն մը կատարելէ: Շէք դիտել տուաւ, որ Երուսաղէմի պայթումին լոյսին տակ կասկած պէտք չէ ունենալ Համասի ահաբեկչական կազմակերպութիւն ըլլալուն մասին: Համաս եւ իսրայէլեան ժիհադ ստանձնած էին գործողութեան պատասխանատուութիւնը:

Իսրայէլի աշխատանք կը տանի, որ Երուսաղէմի Միութեան արտաքին գործոց նախարարներու յառաջիկայ հանդիպումին կարելի ըլլայ համախոհութիւն մը գործցել եւ Համասը ահաբեկչական կազմակերպութիւն մը յայտարարելով՝ պատժամիջոցներ որդեգրել անոր դէմ:

Սիլվան Շալոմ իր կարգին ծափոնի կոչ ուղղած է սառեցնելու Համասի քաղաքական թեկնածուներուն իսկ 680 միլիոն տոլար օժանդակութիւն տուած է պաղեստինցիներուն: Հետեւաբար, թուրք պէտք է ճնշում բանեցնէ, որպէսզի պաղեստինեան իշխանութիւնը ստէրը դառնայ իր յայտարարած յանձնառութիւններուն:

ԼԻԲԱՆԱՆՑԻՆԵՐՈՒՆ ԼԱՅՈՒԱԾՔՆԵՐԸ ՏԱՀՐ ՔԱՏԻՊԷՆ ՀՐԱՏ ԿՈՒՂՈՒԻՆ

Այսօր, երեկոյեան տեղի ունենալիք Հրատի եւ Երկրագունդի առաւելագոյն մերձեցումը դիտելու համար, յատուկ պատրաստութիւններ տեղի կ'ունենան Լիբանանի բարձրագոյն եւ երկրի մէջ ղիտելու ամէնէն յարմար վայրերէն Տահր Քատիպի (Արպ) մէջ:

Շրջանի քաղաքապետը հաստատած է, թէ կազմակերպական աշխատանքները եւ պատրաստութիւնները գրեթէ աւարտած են, մինչ Արպի եւ Պարբէի եւ շրջանի պահուկներն ու ճաշարանները իրենց գինները կէսի նուազեցուցած են, որպէսզի կարելի եղածին չափ մեծ թիւով քաղաքացիներ եւ պօսաշրջիկներ կարենան դիտել Հրատի եւ Երկրագունդի մերձեցումը:

Ան նշեց, թէ փոխադրութեան յատուկ միջոցներ ապահովուած են քաղաքացիներուն, իսկ հոն նստելու եւ յստակօրէն այս իրադրատու դէպքը տեսնելու կարելիութիւններ եւ յարմարութիւններ ստեղծուած են:

ՄԱՀԱԶԴ

Տիկին Օտէթ Էլիսա Արսլանեան եւ գաւազը՝ Էլի Տէր եւ տիկին Սոթիլիս եւ Սոնա Պարութեան եւ գաւազուք

Տիկին Աստղիկ Արսլանեան եւ գաւազը Տէր եւ տիկին Էլիսա եւ Ալիս Մաքսուսի Տիկին Ալիս Միսեան եւ գաւազուք Տիկին Արփինէ Արսլանեան եւ գաւազուք Տիար Ժոզէֆ Ժապարեան եւ գաւազուք Տիար Ճորճ Անարեան եւ գաւազուք Շարպէլ ընտանիք Ճատաւ ընտանիք եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, եղբոր եւ հարազատին

ՃՈՐՃ ՊԱՐԳԵԻ ԱՐՍԼԱՆԵԱՆԻ (ԾԳԵԱՂ՝ 1938ԻՆ)

մահ, որ պատահեցաւ Կիրակի, 24 Օգոստոս 2003ի երեկոյեան, «Հարուն» հիւանդանոցին մէջ, յետ երկարատեւ հիւանդութեան:

Թուղարկուողներու արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Չորեքշաբթի, 27 Օգոստոս 2003, կէսօրուան ժամը 12:00ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատեղի:

●Ներկայ ընդունիլ իբրեւ մահազգ: ●Ցաւակցութիւններ կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը Ժոզէֆ, «Մաքսուսի» զիմաց, «Թաքալ» վանատան շէնք, 4րդ յարկ, Չորեքշաբթի 27, Հինգշաբթի 28 եւ Ուրբաթ 29 Օգոստոսին:

ԱՅՆՃԱՐԻ ՄԷՋ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱՅ

Լ. Պ. ՄԻՈՒԹԻՆՆԵՐՈՒ ԵՐԷՑ ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ ՏԱՐԵԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄԸ

Կիրակի, 24 Օգոստոսին, Այնճարի մէջ իր աշխատանքներուն սկսաւ Լ. Պ. Միոննի Պատանեկան Միութիւններու երէց պատանիներու տարեկան բանակումը: Բանակումը պաշտօնական բացումը կատարեց Լ. Պ. Միոննի: Միութիւններու Ընդհանուր Վարիչ Մարմինի ներկայացուցիչը, ներկայութեամբ բանակումի խմբագրական կազմին: Այս տարուան բանակումը կը կրէ «Լիբանանի Պատանեկան Միութիւններու 80ամեակ» կարգախօսը:

Լ. Պ. Մարմինի ներկայացուցիչը իր խօսքին մէջ նշելով, որ պատանեկան միութիւնները յետապստ օժտուած են սեփական բանակավարով մը, ուր կրնան յաջողակ իրենց տարեկան բանակումները, հաւատք յայտնեց, որ այսօրուան դաշնակցական պատանին ապագային պիտի ըլլայ ներկայացուցիչը խորիմ սերունդի մը, ամբարեղով մտաւոր պաշար եւ ֆիզիքական կարողութիւններ ու պարելով ընկերային ջերմ ու մտերմիկ շրջանակի մը մէջ:

Բանակումը, որուն կը մասնակցին շուրջ 150 երէց պատանիներ, իր աշխատանքները պիտի աւարտէ յաւաքակալ Կիրակի:

ՏԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Բ. ՇԱՍԱԳՈՒՄԱՐԸ ՍԿՍԱԻ ԻՐ ԱՃԻԱՏԱՆՔՆԵՐՈՒՆ



Երէկ, 22 մասուրի վանքին մէջ Հայ կաթողիկէ Ներսէս Պետրոս ԺԹ. պատրիարք բացումը կատարեց Հայ կաթողիկէ Եկեղեցւոյ Բ. Շասագումարին, որուն կը մասնակցին աշխարհի 24 երկիրներէ մեծ թիւով Հայ հոգեւորականներ եւ աշխարհականներ:

Իր խօսքին մէջ Ներսէս Պետրոս ԺԹ. պատրիարքը նշեց, թէ անհրաժեշտ է հեռու մնալ մակերեսային երեւոյթներէ: Ան դիտել տուաւ, որ պէտք է իսկական հայրենի դաստիարակութիւն ջանքով Հայ սերունդներուն եւ կառչած մնալ ազգային սկզբունքներուն եւ հաւատարմութեանը, սակայն միեւնոյն ատեն պէտք է մասնակցել երկիրն տնտեսական, արուեստական, քաղաքական եւ այլ մարզերուն:

Համագումարին մասնակցելու համար Լիբանան կը գտնուին Դաշուազի Հայ կաթողիկէ հոգեւոր առաջնորդ Անթուան Աղաճեան, որ նշեց, թէ Իրաք կ'ապրի հին բարեկոնեան օրեր եւ ժողովուրդը գոհ կ'երթայ նոր Բաբելոնի եւ կը փորձէ ինքզինք գտնել ընդհանուր իրարանցումին եւ անկանոնութեան մէջ: Ան դիտել տուաւ, թէ այսօր Իրաք կ'ապրի իր պատմութեան ամէնէն սեւ օրերը եւ կը խորհարարի մթնոլորտին մէջ: Ան կոչուողը բոլոր պետութիւններուն՝ արարական թէ՛ այլ, օժանդակելու Իրաքի եւ անոր ժողովուրդին, որ պէտք է կարենան դուրս գալ բռնագրաւողներու լուծէն եւ վերագտնեն իրենց կայունութիւնը, ազատութիւնն ու արժանապատուութիւնը:

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՈՒԺԵՐՈՒ ԳԵՄ ՅԱՐՉԱԿՈՒՄՆԵՐԸ...

Շարունակուած Ա. էջէն

Երէկ ձեռնարկած է հեւտապնդման եւ ձեռքարկումի մը հրաւիրելու՝ Իրաք ուժ ուղարկելու ծրագիր մը քննարկելու համար: Էրտողանի անցից, որ Հոկտեմբեր 15-ին առաջ խորհրդարանը արտակարգ նիստի մը հրաւիրելու՝ Իրաք ուժ ուղարկելու ծրագիր մը քննարկելու համար: Էրտողանի անցից, որ Հոկտեմբեր 15-ին առաջ խորհրդարանը արտակարգ նիստի մը հրաւիրելու՝ Իրաք ուժ ուղարկելու ծրագիր մը քննարկելու համար:

Միացեալ Նահանգները պատրաստ են յաւելել իր ուժերը Իրաքի մէջ գտնուող պետութեան իրական հրամանատարը այդ պահանջը ներկայացնել, յայտնեց պաշտպանութեան նախարար Տոնի Ռամսֆելտը, այն պահուն էր սահմանակից Թուրքիա եւ Իրան Իրաքը գրաւող ուժերէն կը պահանջէին կարգն ու կանոնը վերահաստատել:

Թուրքիա եւ Իրան ամերիկեան եւ բրիտանական ուժերը կը մեղադրեն Իրաքի մէջ ծայր տուող բախումներուն եւ իսրայէլական շարժումներուն սահմանակցական արարքներու համար: Անոնք կ'ըսեն, որ դաշնակից ուժերը արեւելի յուրջ ու հետեւողական աշխատանք պէտք է տանին, երաշխատրելու համար ապահովութիւնը եւ կարգն ու կանոնը վերահաստատելու համար:

Ռամսֆելտը ըսաւ, որ եթէ ամերիկեան ուժերու հրամանատար Վոր. Ճոն Ապիլայտը ըսէ, որ կարիքը ունի յաւելել ուժերու, «մէկ վայրկեանուան մէջ» պիտուր կ'ողարկուի: Իրաքի մէջ դաշնակից ուժերը քննարկողներուն կարգին է Իրանի նախագահ Մոհամէտ Խաթեմի, որ ըսաւ, թէ անոնք պատասխանատու են շիի կրօնապետ ալայթոյլա Մալիտ Մոհամէտ Մալիտ Հաքիմի դէմ մահափորձին: Խաթեմի դիտել տուաւ, որ դաշնակից ուժերուն պարտականութիւնն է հսկել ապահովութեան եւ կայունութեան: Թուրքիոյ վարչապետ Ռեճէփ Թալիպ Էրտողան ըսաւ, որ իր կառավարութիւնը

Arabic header with logos and text: البيرق, الامراء, التماز, السفير

ԻՆՉ ԿԸ ԳԻՆԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐՈՒԹԵՐԸ

Համասի նահատակներուն թաղումն ու վրէժխնդրութեան կոչերը, Իրաքի մէջ ամերիկեան պիտուրներուն դէմ շարունակուող յարձակումներն ու բողոքի ցույցերը եւ Պոմպիլի մէջ տեղի ունեցած պայթումները կը հանդիսանան իրաքական օրաթերթերուն 26 Օգոստոսի գլխաւոր լուրերը:

Լիբանանեան գեոնի վրայ, օրաթերթերը լուսարձակի տակ առած են Իսրայէլի կողմէ Հրկայալայի երկու նահատակներու դիակներուն յանձնուումը եւ քաղաքական կեանքը յուլող պահանջները: Իրաքի օրաթերթերը կատարելու է «Խաղաղութիւնը փրկելու ու ապահովելու» յանձնարարը կատարելու: «Սաֆիր»-ի համաձայն, բախումներ տեղի կ'ունենան Երուսաղէմի մէջ, իսկ ապահովութեան պարիսպը օրէ օր կը բարձրանայ: Թերթը դիտել տուած է, թէ բախումներն ու անհամաձայնութիւնները կը վերահսկուին պաղեստինեան իշխանութեան մէջ:

ԸՈՉՊԱՍՏԱԿ ԿԸ ՆԱԿԱՏԱԿՆԵՐՈՒՆ ԴԻԱԿՆԵՐԸ

«Սաֆիր» գրած է, թէ գերիներու փոխանակման բանակցութիւնները բաւական չգալուն հանգրուան մը կը թուակոխեն: Հրկայալայ կը ստանայ իր նահատակներուն երկու դիակները, գերմանացի միջնորդին Իսրայէլ այցելութեան իբրեւ արդիւնք:

«Նահար» նշած է, թէ գերմանական միջնորդութեամբ նոր յաջողութիւն մը արձանագրուեցաւ գերիներու փոխանակման գործընթացին մէջ եւ Հրկայալայ ստանձնեց իր նահատակ անդամներուն դիակները:

ՇԱՍԱԿ ԵՒ ՆԱԿԱՏԱԿՆԵՐՈՒ ԹԱՂՈՒՄ-ՊԱՂԵՍԻՆԵԱՆ ԿԵԱՆՔ


«Անուար» գրած է, թէ հապարաւոր պաղեստինցիներ մասնակցեցան Համասի չորս հետեւորդներու թաղման եւ Համասի հաստատեց, թէ Իսրայէլ շատ սուղ պիտի վճարէ անոնց արեւանքները: Լուտ թերթին, Ռանթիսի յայտնեց, թէ իրենք կարող են պատերապմ շարունակել եւ դիմադրել մինչեւ անոր աւարտը եւ Իսրայէլի յիշեցուց, թէ իր կատարած ահաբեկումները անհետեւանք պիտի չմնան:

Թերթը դիտել տուած է, թէ Իսրայէլ կը սպառնայ շարունակել կապալի եւ Այսրյորդանի մէջ:

«Սաֆիր» գրած է, թէ Սուրիոյ արտաքին գործոց նախարար Ֆարուք Շարիֆ Քուէյթէն եւ Միացեալ Էմիրութիւններէն ետք Քաթար կ'այցելէ եւ կը յայտարարէ, թէ Սուրիոյ ուղղուած ամերիկեան ամբաստանութիւնները խորքին մէջ խորհուրդը կը յայտա-

Arabic advertisement for Balkan Holidays with logos and text: Balkan Holidays, TRANSLITEX TOURS, ԳԵՊԻ ՎԱՌԱ ԵՐՉԱՊՏՈՅՏՆԵՐՈՒ 36 ՏԱՐՈՒՍԱՆ ՓՈՐՉԱՌՈՒԹԻՒՆ

ՌԱՊԻԷԻ ՍՈՂՈՒՆԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԵ ԱՆ ՈՒ ՍԱՐՍԱՓԻ ՄԱՏՆԵԼ ՇՐՋԱՆԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ



15 օրէ ի վեր լիբանանեան յուսարձակներն ու օրաթերթերուն ուղարկութիւնը իր վրայ հրաւիրող, Ռապիէի ու Սթալլէպի մէջ շրջապայտ սողունը կը շարունակէ իր «շրջապատը» եւ կ'այցելէ շրջանի բնակիչներուն տուններն ու պարտէզները:

Լիբանանեան քաղաքային պաշտպանութեան ուժերը մնալուն կերպով հաստատուած են այլ շրջաններուն մէջ եւ անոնք կը հետեւին սողունին շարժումներուն եւ հետքերուն եւ կը փորձեն սպաշտու Սիւն ներքին: Եւ շրջանի բնակիչներուն: Հետաքրքրական է, որ սողունը կը պտտի գիշերները: Յանձնարարուած է գայն ողջ բռնել ու չսպաննել, որովհետեւ անիկա իւրայատուկ կենդանի մըն է:

Շուրջ 80 անգամներէ կազմուած խումբեր եւ չորս մարզուած շուներ կը փորձեն հետապնդել սողունը: Ըստ անոնց, ան կերած է հաւեր, շուներ, աղուէսներ եւ նոյնիսկ յափած է անոնց կողմէ իրեն տրուած թունաւոր միջոցներ: Ան մտած է Ռապիէի վիլաններէն ներս եւ լողացած է լողաւազաններուն մէջ մեծ քանակութեամբ ջուր խմելով: Չայն տեսնողները կը վկայեն, թէ ան բաւական մեծ է ու վախազուր:

Քաղաքային պաշտպանութեան ուժերու պատասխանատուները կը հաստատեն, թէ թէեւ ան մեծ է ու վախազուր, սակայն քաղաքացիները պէտք չունին իրար անցնելու, այլ պէտք է զգուշ ըլլան, որովհետեւ սողունը չի յարձակիր եթէ իրեն վնաս չհասնի:

Armenian advertisement for «ԱՉԳԱԿ» - ՄՐՅԱՆԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՄՐՅՈՒՄ

Armenian advertisement for Balkan Holidays with text: Balkan Holidays, TRANSLITEX TOURS, ԳԵՊԻ ՎԱՌԱ ԵՐՉԱՊՏՈՅՏՆԵՐՈՒ 36 ՏԱՐՈՒՍԱՆ ՓՈՐՉԱՌՈՒԹԻՒՆ

Arabic advertisement for Balkan Holidays with text: Balkan Holidays, TRANSLITEX TOURS, ԳԵՊԻ ՎԱՌԱ ԵՐՉԱՊՏՈՅՏՆԵՐՈՒ 36 ՏԱՐՈՒՍԱՆ ՓՈՐՉԱՌՈՒԹԻՒՆ

ՆՅԱՐ

ՀԱՄԱԶԳԱՅՆԱԿԱՆ ԾԱՌԸ

Մշակույթ եւ հայրենասիրութիւն՝ երկու տարբեր իմաստներ են մէկ գաղափարի մէջ միաձուլուած: Անոնք կ'արժեւորուին, կազմաւորուին ու ինքնահաստատումի իրաւունքին համար պայքարող նորահաս սերունդի մը կայունացման ի խնդիր՝ յունահայ գաղութի համագայակման միակամուրթեան ընդհանուր կշռոյթին մէջ:

Խօսքը կը վերաբերի Համագայակման մէկ միաւորին «Նայիրի» պարտիւմի 35 տղոց ու աղջիկներուն, որոնք ամառները յունական կղզիները հրաւիրուելով՝ իրենց փայլուն ելոյթներով հայութիւնն ու դատ կը ծանօթացնեն խոստմնալից ներուժով, ինքնուրոյն յարաբերականութեամբ եւ որակի ինքնավստահութեամբ:

Հայու մշակույթը կենսական անհրաժեշտութիւն է. նախ՝ հայու լինելու, նոյնքան նաեւ՝ առարկայականօրէն օտարին համար: Ազգային արժեքներու պահպանումն ու տարածումը ազգային լիցքաւորման, այլեւ յանձնառութեան հարց է:

Պէտք է պատրաստ ըլլալ միշտ. ամէ՛ն ժամու. ամէ՛ն քաղաքի մէջ՝ քրտիցքի, գոհարներու բեռն եւ հաւաքական ազգային շահու արժեւորման համար: Հաւատքով ու համապատասխան գործով:

Մշակույթը պատմական խորք ունի, ուստի նաեւ անքակտելիօրէն տերն է ազգին՝ իր պատմութեամբ ու սնուցիչ խորքով, հիմքով, գոյամարտով՝ հեռու հասարակ ֆիզիսթաներէ, glamo-rous շփացածութիւններէ:

Ժամանակի մը մէջ, երբ մարդիկ գօրակոչի կ'ենթարկեն ու կը քաշալերեն դիւրինը, Ժամանակը, երեւութականն ու ծիծաղելին, մեր երիտասարդները կը հաւատան, որ կղզիներու բեմերը ողողելով հայկական նուագով, նաշխուն տարագով, հայկական պարով ու գիրքերով՝ հայութեան անշեղ արժեքներուն դիմաց պատուհան ու հորիզոն կը բանան՝ ամրապնդելով հայու մշակութային քաղաքականութեան աշխարհաքաղաքական գործօնները:

«ԱԶՍ ՕՐ»

ԼՈՒՐԵՐ ՆԱՅԱՇԽԱՐԿԵՆ

ԱՅՍ ՏԱՐՈՒՄՆ ԱՐՏԱԾՈՒՄՆԵՐՈՒՆ ՄԵՉ ԿՐ ԳԵՐԱԿՇՈՒՆՔՆ ԲՈՒՆԱԲԸ, ԳԻՆԻՆ ԵՒ ԾԽԱՍՈՏԸ

Հայաստանի գիւղատնտեսութեան նախարարութեան տուեալներով, այս տարուան առաջին եօթը ամիսներուն Հայաստանէն արտածուած է 2361 թոն ծիրան, 420 թոն կեռաս, 42 թոն սալոր, 4 թոն դեղձ եւ 35 թոն բանջարեղէն, սակայն արտածումներուն մեծագոյն համեմատութիւնը կը կազմեն ոգելից ըմպելիները եւ ծխախոտը:

Անցեալ տարուան նոյն ժամանակաշրջանին հետ բաղդատած 6 անգամով աւելցած է պանիրի (արտածուած է 361 թոն), 2,5 անգամով ձուկի (3 թոն) եւ խնցղետինի (2,7 թոն) արտածումը: Արտածուած է նաեւ աւելի քան 5 թոն մեղր եւ 291 թոն կոփու միս: Այս տարի առաջին անգամ արտածուած է 21 թոն պաղպաղակ եւ փոքր քանակով կաթի փոշի:

Քոնիաք արտածուած է 2,98 միլիոն լիթր, գինի՝ 1 միլիոն 877 հազար լիթր, օղի (291 հազար լիթր), ինչպէս նաեւ ծխախոտ (4 միլիոն 629 հազար տոնի):

Շուրջ 10 միլիոնով պակաս է հակելիթի արտածումը (2002ին արտածուած էր 22,7 միլիոն), որովհետեւ թռչնարուածարաններու տէրերը մասնաճիւղեր հիմնած են Վրաստանի մէջ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՆՍՈՒՆ ԵՐԲԻՆ ԱՐՏԱԳՐՈՒԹԻՒՆԸ՝ 668 ՄԵԼԻԱՌ ԴՐԱՄ

Հայաստանի համախառն ներքին արտադրութիւնը Յունուարէն Յունիս ամիսներուն կազմած է աւելի քան 668 միլիարդ դրամ (մօտաւորապէս 1,2 միլիարդ տոլար): Հայաստանի Ազգային վիճակագրական ծառայութեան տուեալներով, համախառն ներքին արտադրութեան աճը 2002ի նոյն ժամանակաշրջանին հետ բաղդատած կազմած է 114,9 առ հարիւր:

Գալով Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան, 2003ի առաջին կիսամեակին Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան համախառն ներքին արտադրութիւնը կազմած է 11,3 միլիարդ դրամ (մօտաւորապէս 20 միլիոն տոլար), որ նախորդ տարուան նոյն ժամանակաշրջանին հետ բաղդատած աւելի է 1,51 միլիարդ դրամով կամ 12,7 առ հարիւրով:

ՖԻՆԱՆՏԱՅԻ ԵՐԻՏԱՍԱՐԳ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆՆԵՐՈՒ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆ

11-18 Օգոստոս 2-8-7- Հայաստանի երիտասարդական եւ ուսանողական միութիւններու հրահանգով Հայաստանի աշխարհի ֆինանսաւարտարի Սոցիալ դեմոկրատական կուսակցութեան երիտասարդական թեւի ներկայացուցիչներու խումբը՝ Ռիքա Քեքելիտայի ղեկավարութեամբ:

Ֆինանսացի երիտասարդները հանդիպումներ ունեցան Հայաստանի ընկերային ապահովութեան նախարար ընկ. Աղուն Կարգանեանի, Հայաստանի Ազգային Ժողովի 2-8-7- խմբակցութեան ներկայացուցիչ ընկ. Լեւոն Մկրտչեանի, 2-8-7- Երիտասարդական եւ «Նիկոլ Աղբալեան» ուսանողական միութիւններու ներկայացուցիչներու հետ:

Հանդիպումներուն ընթացքին հիւրերը հետաքրքրուեցան Հայաստանեան կեանքի տարբեր մարզերով՝ կրթութիւն, երիտասարդութիւն, տնտեսութիւն եւ այլն: Ըստ Ռիքա Քեքելիտայի, ֆինանսացի երիտասարդներու խումբը մտադիր է ստացած տեղեկութիւնները տեղադրել համացանցային առանձին էջի վրայ, ուր պիտի լլլան 4 ուղիքային երեք պետութիւններուն վերաբերող նիւթեր:

Ֆինանսացի երիտասարդները նպատակ ունին Ֆինանսայի մէջ կազմակերպել Հայաստանի լուսանկարներու ցուցահանդէս, ինչպէս նաեւ դպրոցներու մէջ հանդիպելով ուսուցիչներուն հետ՝ ներկայացրելու Հայկական Յեղափոխութիւնը:

Հիւրերը այցելեցին նաեւ Արցախ, ուր տեսակցեցան Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան կրթութեան եւ մշակույթի նախարար ընկ. Արմէն Սարգսեանի հետ, մասնակցեցան այդ օրերուն 2-8-7- երիտասարդական եւ ուսանողական միութիւններու համահայկական Ցրդ բանակումին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԲԺՇԿՆԵՐ ԵՒ ԱԿՆԱԶԵՐԾՄԱՆ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ Կ'ԱՌԱՔԷ ԻՐԱՔ

Անցեալ Շաբաթ Հայաստանի պաշտպանութեան նախարարութիւնը հրապարակեց հաղորդագրութիւն մը Հայաստանի րանակի սպայակոյտի պետ գօր. Միքայէլ Յարութիւնեանի անունով, ուր կը յստակացուէր Իրաքի վերականգնման գործընթացին Հայաստանի մասնակցութեան հարցը:

Հաղորդագրութեան մէջ կը նշուի, որ «Հայաստանի մասնակցութիւնը Իրաքի մէջ կը նկատենք իբրեւ շրջանին մէջ կայունութեան հաստատման Միացեալ Նահանգներու ծրագրի ներդրում կարելիութեան չափաւորակցելու նախաձեռնութիւն»՝ աւելցնելով, որ Հայաստանի դիրքորոշման ձեւաւորման վրայ ազդած է նաեւ Իրաքի 30 հազարնոց հայկական համայնքի ճակատագրի նկատմամբ մտահոգութիւնը:

Ըստ հաղորդագրութեան, իբրեւ Միացեալ Նահանգներու հետ բանակցութիւններու արգիւնք, համաձայնութիւն գոյացած է Իրաք գործողելու հայկական բանակէն 3 զինուորական բժիշկներ եւ ակնազերծման 10 մասնագէտներ:

Հայաստանի ներկայացուցիչներու գործունէութիւնը ամերիկեան հրամանատարութեան հետ համագործելու եւ կանոնակարգելու նպատակով, Ամերիկա պիտի այցելէ հայկական բանակէն սպայ մը:

Հաղորդագրութիւնը կ'եզրափակուի ըսելով, որ Իրաքի վերականգնման գործընթացին մասնակցութիւնը կը նպաստէ Հայաստանի քաղաքական հեղինակութեան աճին՝ ցոյց տալով միջազգային ապահովութեան եւ կայունութեան հաստատման գործընթացներուն մասնակցելու պատրաստակամութիւնը, ինչպէս նաեւ կը նպաստէ Ամերիկայի հետ զինուորական գործակցութեան ու Հայաստանի ապահովութեան ամրապնդման:

«ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ ԱՅՍՕՐ» ՏԻ. Վ.Ի. ՏԻ.Ի ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

Կանացի հիւանդութիւններու ամերիկահայ, մասնագէտ տոքթ. Սահակ Արսլանեան գործադիր-արտադրիչն է ամերիկեան «Չարթըր քոմիւնիթի յընթ» ՅՈՒԳ կայանէն ամէն շաբաթ կէսօրէ ետք ժամը 3էն 4 սփռուող «Բժշկութիւնը այսօր» յայտագրի, որ ուղիղ եթերով կը պատկերասփռուի Կլինտոնի եւ Պրայմթիւնի մէջ:

Այս յայտագրին ընթացքին, տոքթ. Սահակ Արսլանեան գրոց կ'ունենայ զանազան մարզերու մէջ մասնադիտացած, վկայեալ հայ բժիշկներու հետ:

Այժմ տոքթ. Սահակ Արսլանեան հանրութեան տրամադրութեան տակ կը դնէ բժշկական գիտելիքներու հայերէն («ՏԻ. Վ.Ի. ՏԻ.») մը, որ քաղուած եւ համադրուած է պատկերասփռուի վրոյն յետքով «Բժշկութիւնը այսօր» ծրագրի: Առաջին անգամ է, որ նման մասնագիտական ժապաւէն մը լոյս կը տեսնէ հայերէնով:

Բովանդակութիւնը պատրաստուած է անցեալին տոքթ. Սահակ Արսլանեանի կատարած հարցազրոյցներէն: Զրուցակիցն է տոքթ. Վիգէն Սահակեան:

Տօքթ. Սահակ Արսլանեանի համաձայն, յատկապէս ամիսներուն պիտի հրապարակուին նաեւ այլ նիւթերու մասին «ՏԻ. Վ.Ի. ՏԻ.»-ները:

ՄԵԾ ԻՐԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ ՀԵՏԵԻՅԷՔ BIG SALE STORES

Advertisement for a clothing sale featuring various items and prices. Items include: Թ-Ի ՇԼՐԹ 6.000 L.O., ՆԱԳՈՒՍՏ 8.000 L.O., Թ-Ի ՇԼՐԹ 2.000 L.O., Թ-Ի ՇԼՐԹ 7.000 L.O., ՆԱԳՈՒՍՏ 2.000 L.O., ՇԱՊԻԿ 10.000 L.O., Թ-Ի ՇԼՐԹ 1.000 L.O., ՏԱԲԱՏ 5.000 L.O., ԱՆՆԿԱՐՆ ՏԱԲԱՏ 10.000 L.O., Թ-Ի ՇԼՐԹ 5.000 L.O., ՍԱՆՏԱԿ 4.000 L.O., ԿՕՇԻԿ 4.000 L.O., ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՉԵԻՐ Թ-Ի ՇԼՐԹ 10.000 L.O., ԳԼԽԱՐԿ 2.000 L.O., ՏԱԲԱՏ 6.000 L.O., ԱՆՆԿԱՐՆ ՏԱԲԱՏ 10.000 L.O., Թ-Ի ՇԼՐԹ 5.000 L.O., ՍԱՆՏԱԿ 4.000 L.O., ԿՕՇԻԿ 4.000 L.O., ԼՈՂԱԶԳԵՍՏ 9.000 L.O.

Big Sale Branches list:
* ՀԱՄՐԱ ՄԻՆԵՍԱ ՓԻՔԱՏԵԼԼԻԻ ԿԻՑ 01 / 343343
* ՆԱՊԱԹԻԷԻ ՀՐԱՊԱՐԱԿ 03 / 949796
* ՊԸՐԺ ՊԱՐԱԺՆԷ 03 / 678501
* ԱՆԹԼԻԱՍ ՄԵՆԹՐ St. Elie 03 / 814161
* ՄԱՐ ԷԼԻԱՍ CLASS ՎԱՅՆՈՒՍԻՆ ԿԻՑ 03 / 602554
* ՅԸՐՆ ԷԼ ՇԸՊԷՔ ՄԻՆԵՍԱ ՍՔԱԼԱ 01 / 294090

ՄՍՈՐՈՒՄՆԵՐ՝ ԳԻՐՔԻ ՄԱՍԻՆ

ԳԻՐՔ. ԱՅՍԻՆՔՆ՝ ՄԵԿԵՆԱՍ, ՀԵՂԻՆԱԿ, ԸՆԹԵՐՅՈՂ

Գիրք սիրելի, ընթերցասեր ըլլալը կապ չունի գարգացման կամ ուսման մակարդակին հետ: Ընթերցասեր անձեր կան գարգացած քեթոնարի ուսման տեր մարդոց դասակարգերում մեջ: Ընթերցումը կը գարգացնէ մարդը, կը հարուստացնէ անոր գիտելիքներու պաշարը, կ'առաջնորդէ ընդհանուր գարգացման:

Գիրք չսիրողները, կարողալը աւելորդ ու անօգուտ նկատողները լեցացած անձեր են, իրենց գիտցածին, սահմանափակ գիտութեան շուրջ դարձողներ, ուրիշին գիտցածն ու անկէ իմացածը կրկնողներ, տեսակ մը մարդ, որ ոչինչ ունի փոխանցելիք իր շրջապատին, իր ընտանիքին. խոտի տեսակ մը, որ ո՛չ բոյս ունի, ոչ ալ հետաքրքրող երեւոյթ: Անոր շրջանակը կազմուած է իր նմաններով, չի կրնար լեզու գտնել միւս դասակարգին հետ, որքան ալ յաջողած ըլլայ շուկայի վրայ, նիւթապէս բարօր կամ հարուստ:

Գիրքը հմայք ունի: Թող ոչ ոք ունենայ այն կարծիքը, քէ համակարգիչի դարուն, գիտութեան գարմացնող այս դարուն մոռացութեան կրկնա տրուի ԳԻՐՔ հասկացողութիւնը: Համակարգիչը կամ համացանցը իրենց տեղն ունին, գիրքը իր տեղը: Ահա քէ ինչն ու մամուլը կը դառնայ անդադար, գիրքեր ու քերթեր լոյս կը տեսնեն, կը հրատարակուին երկեր, գուցէ սնունդ տալու ինձորն էն ինք:

